# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/6

10 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին Մարուսյա Հովհաննիսյանը, Արտուշ Մաթևոսյանը, Անժելա Վանեսյանը:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը:**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Աննա Նավասարդյանը:**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի մայիսի 10-ի N6 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N141-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
2)Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին
3)Պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարներ սահմանելու մասին
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5)Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային

Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

**Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 49-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 141-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1,N2,N3,N4 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 50-Ն/**

**ԼՍԵՑ - ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Սահմանել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ՝
1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Անդրանիկի փողոց շենք 36 բնակարան 18 հասցեում հաշվառված Էրիկ Եգորի Բարխուդարյանին (ծնված 02.06.1985թ., ՀԾՀ՝ 1214850081) սեփականության իրավունքով իրեն պատկանող NISSAN PATHFINDER 4.0 մակնիշի (թողարկում՝ 2007թ., պետ. համարանիշ՝ 35ZR095, ձիաուժ՝ 269) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 104250 (հարյուր չորս

հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2023 թվականի տարեկան փոխադրամիջոցի գույքահարկի վճարումից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 51-Ա/**

**ԼՍԵՑ - ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Տաշտուն գյուղի Մեղրասար թաղամաս 1 հասցեում գտնվող 31,392 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-100-0592-0002) և Տաշտուն գյուղի Մեղրասար թաղամաս 2 հասցեում գտնվող 7,45269 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-100-0592-0003), պետական սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման վարձավճարներ սահմանել տարեկան 4 708 800 (չորս միլիոն յոթ հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ և 1 108 800 (մեկ միլիոն հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 52-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն, որպես առաջնահերթ միջոցառում, ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար, համայնքային սեփականություն հանդիսացող

հողերից 14,61842 հեկտար՝ որից գյուղատնտեսական նշանակության 12,92304 հեկտար այլ հողատեսք, բնակավայրերի նշանակության 1,69538 հեկտար այլ հողատեսք /կադաստրային ծածկագիր 09-092-0301-0001-ից,09-092-0102-0001-ից, 09-092-0101-0001-ից/ փոխադրել արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 53-Ա/**

**ԼՍԵՑ - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԻԱՎՈՐՄԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. Համաձայնություն տալ Մեղրի համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ- տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Մեղրի համայնքի 2023 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 54-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հունիսի 27-ը՝ ժամը 17:00-ն:

**Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 55-Ա/**

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՉԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը